

Նր խոսեց «Բազմավէպը» և հայկական երաժշտությունը» Այնուհետև շուրջ՝ այն բաժանելով երկու մասերի: Բանն այն է, որ հանդեսն իր էջերում ընդարձակ տեղ է հատկացրել և՛ եվրոպական, և՛ հայկական երաժշտարվեստներին: Նա հատկապես կանգ առավ Կոմիտասի և «Բազմավէպի» կապերի վրա՝ շեշտելով նաև ընդգծված հետաքրքրությունը նոր հայտնվող Տիգրան Զուխաշյանի հանդեպ:

Հատուկ հոբելյանի առիթով Վենետիկ ժամանած «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամի ստեճապետ Երվանդ Ազատյանն իր խոսքում ասաց. «Միսիթարյան միաբանությունը մաս կկազմե մեր էության և ամեն հայ երախտագիտական սուրբ մը ունի անոր ստեղծած հակա հարստության հանդեպ», ասպ շարունակեց. «Ալեք Մանուկյան» հիմնարկը մեծ հարգանք ունի և այսուհետև ևս ճուշ վերաբերումը պիտի պահե հանդեպ Միսիթարյան միաբանության:

Հիշյալ գիտածողովին Հայաստանից որպես քանախոս էր հրավիրված տողերիս հեղինակը: Ներկայացրածն զեկուցումը՝ «Խաչատուր Էրզրու մեցու դերը Միսիթարյան միաբանության Վենետիկում հաստատվելու հարցում», նպատակ ուներ բազմաթիվ փաստերով ցույց տալու 17—18-րդ դարերի ասիմանագծին ասպրած և ստեղծագործած հայ մշակույթի այս բազմերախտ գործչի անուրանալի դերը Վենետիկի Ս. Ղազար կղզին որպես Միսիթարյանների վերջնական հանգրվան ընտրելու, ինչպես նաև միաբանության հետագա կայացման գործում:

Մնացած զեկուցումները շոշափում էին «Հայագիտական աշխարհն ու մամուլը Վենետիկից դուրս» ընդհանուր թեման: Լոս Անջելեսի UCLA համալսարանի դասախոս Կարո Մոսյանը հանգամանորեն խոսեց «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայագիտական մամուլի մասին»՝ զանազանություն դնելով հայագիտական և հսկական միջև և

ընդգծելով, որ առաջին իմաստով մամուլ գոյություն չունի Միացյալ Նահանգներում «ի բաց առյալ այն գիտական հոդվածները, որոնք պատահաբար լույս կտեսնեն համալսարանական մամուլին մեջ»:

Բեյրութի «Մասիս» անագրի խմբագիր Անդրանիկ վրդ. Կոստյանը զեկուցեց «Միջին Արևելքի հայագիտական մամուլը» թեմայի շուրջ, Սուրեն Քոլյանյանը (Ռուսիայի)՝ «Հայագիտական մամուլը Հայաստանում», իսկ Ռեմոն Հարություն Գևորգյանը՝ «Եվրոպայի հայագիտական մամուլը»: Վերջին քանախոսը Լոս Անջելեսի UCLA համալսարանի գրադարանային հայկական բաժնի վարիչ Միս Ալվազյանն էր, որ ներկայացրեց «Հայագիտություն» թե Հայ-գիտություն նախաեղեռնական պոլսահայ մամուլին մեջ» զեկուցումը:

«Բազմավէպի» 150-ամյա հոբելյանին նվիրված գիտածողովի հանդիսավոր փակումը տեղի ունեցավ Ս. Ղազարի մայրավանքում աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի համերգով, որը հնչեցրեց դասական և հայկական պատարագային երգեժշտություն: Իր իսկ նվիրած փառավոր երգեհոնով նա առ օրը առաջին անգամ կատարեց ամերիկացի ժամանակակից կոմպոզիտոր Ջեֆրի Բրոդիի «Միսիթարյան թափոր» ստեղծագործությունը՝ նվիրված այս լուսավոր հոբելյանին:

Հոբելյանական հանդիսույթանց օրերին մարավանքի «Ստեփան Սրապյան» սրահում բացվել էր հայ պարբերական մամուլի ճոխ ցուցահանդես, որտեղ կողք կողքի ցուցադրված էին «Ազդարարի» առաջին համարներից մինչև հայագիտության տարբեր մարզերն ընդգրկող «Բազմավէպի» մատենաշարի 36 հատորները: Վենետիկում հոբելյարի Բացառիկ թիվն էր՝ իր հարուստ բովանդակությամբ:

Լ. Ե. ԼԱՃԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ բացառիկ կարևոր իրադարձություն պետք է համարել Երևանի պետական համալսարանի հիմնադրումը: Դրանով շուրջ վեց հարյուր տարվա ընդմիջումից հետո Հայաստանում վերականգնվում էին համալսարանական քարձրագույն կրթության ավանդույթները:

Երևանի համալսարանը, հիմնադրվելով Հայաստանի առաջին Հանրապետության օրոք՝ 1819 թ. մայիսի 16-ին, և լինելով մեր բուհերի առաջնեկը, իր գոյության յոթուկես տասնամյակների ընթացքում արտաբնական է շուրջ 80 հազար քարձրորակ մասնագետներ, որոնցից 800-ը՝ օտարերկրացիներ, աղբ թվում և

310 պիտոքահայեր: Նրա շրջանավարտներից շատերը հետագայում դարձել են աշխարհահռչակ գիտնականներ, գրողներ ու մշակութային գործիչներ: Իր հիմնադրման տարում համալսարանն ունեցել է ընդամենը մեկ՝ պատմալեզվագրական ֆակուլտետ՝ 260 ուսանողով և 27 դասախոսով:

Երևանում համապատասխան շենք ու հարմարություններ չլինելու հետևանքով այն տեղափոխվում է 1920 թ. փետրվարի 21-ից սկսած մեկ կիսամյակ գործում է Ալեքսանդրապոլում: Սակայն շուտով համալսարանի վարչությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը գտնում են, որ Հայաստանի մայր բուհը պետք է գործի մայրաքաղաքում և ոչ թե

գավառական կենտրոնում: Ուստի, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, 1920 թ. հունիսի 21-ից համալսարանը կրկին տեղափոխվում է Երևան: Սակայն երկրում տիրող քաղաքական ու պատերազմական ծանր կացության հետևանքով ժամանակավորապես դադարեցվում է նրա գործունեությունը, որը վերականգնվում է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո միայն. այս անգամ արդեն երկու՝ բնագիտական ու հասարակագիտական ֆակուլտետներով, որոնք առաջին ուստարում ունեին 255 ուսանող և 28 դասախոս:

Հետագա տասնամյակներում վերակառուցվել և ընդլայնվել են նրա ֆակուլտետները՝ ընդգրկելով ժողովուրդագիտության, գիտության, լուսավորության և մշակույթի գրեթե բոլոր բնագավառների համար մասնագետներ պատրաստելու ոլորտները: Անցած 75 տարիների ընթացքում Երևանի համալսարանի ֆակուլտետների հիման վրա են ստեղծվել մեր հանրապետության մի շարք բուհեր, որոնք են պոլիտեխնիկական (ներկայումս՝ ճարտարագիտական և ճարտարապետաշինարարական ինստիտուտները), գյուղատնտեսական, բըժշկական, մանկավարժական, ժողովրդական տնտեսության, օտար լեզուների ինստիտուտները:

Այսօր Երևանի համալսարանն ունի 18 հիմնական և 2 օժանդակ ֆակուլտետ՝ 110 ամբիոնով, որոնցով աշխատում են 1200 դասախոսներ. այդ թվում՝ 25 ակադեմիկոս ու թղթակից անդամ, 130 դոկտոր-պրոֆեսոր, 700 գիտությունների թեկնածու և դոցենտ: Ուսանողների թիվը հասնում է մոտ 10 հազարի, որից 300-ը օտարերկրացիներ ու սփյուռքահայեր են, իսկ ասպիրանտներինը՝ 250 է: Համալսարանը ներկայումս մասնագետներ է պատրաստում 23 մասնագիտությունների ու 77 մասնագիտացումների գծով:

Երևանի համալսարանը նաև գիտական աշխատանքի խոշոր կենտրոն է, ուր 36 հիմնական ուղղություններով հետազոտություններ են կատարվում: Այդ աշխատանքները ներառում են ֆիզիկամաթեմատիկական ու բնագիտական և հումանիտար ու հասարակական գիտությունների գրեթե բոլոր ճյուղերը, որոնցում ընդգրկված են 1.000-ից ավելի գիտնականներ:

Առաջին գիտաճյուղի ուղղությամբ հետազոտություններ են կատարվում «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորումում, մաթեմատիկայի միջբուհական կենտրոնում, 26 գիտահետազոտական լաբորատորիաներում ու 13 խմբերում և բազմաթիվ ամբիոններում: Ուսումնասիրվում են էներգետիկայի, բարձր էներգիաների, լազերային տեխնիկայի, ֆունկցիաների տեսության, աստղաֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, պինդ մարմնի ֆիզիկա-

յի, օրգանական և ֆիզիկական քիմիայի, բժշկության, դեղաբանության, կենսատեխնոլոգիայի, կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզի, գյուղատնտեսության, հանքային ռեսուրսների աղյի պրոբլեմները:

Երկրորդ ուղղության մեջ մտնում են հատկապես հայոց պատմությունն ու հայերենագիտությունը, լեզվաբանությունն ու արևելագիտությունը, հայ գրականության պատմությունն ու իրավագիտությունը, մանկավարժությունն ու հոգեբանությունը, գրական-մշակութային կապերն ու բառարանագրությունը, հասարակագիտությունն ու ժամանակակից հումանիտար գիտությունների մի շարք այլ խնդիրների ուսումնասիրությունը՝ կապված հայագիտության հետ: Այդ աշխատանքները կատարվում են Հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայում ու հինգ տասնյակից ավելի ամբիոններում: Համալսարանական գիտնականները զբաղվում են նաև գիտության պատմության ու ժամանակակից գիտությունների մի շարք այլ խնդիրների ուսումնասիրությամբ: Համալսարանի դերը կարևորվում է նաև ժողովրդի հասարակական գիտակցության ձևավորման ու նրա կրթական մակարդակի բարձրացման ասպարեզներում:

Նկատի ունենալով մեր մայր բուհի այդ լուրջ ներդրումը երկրի գիտամշակութային ու հասարակական-քաղաքական կյանքում, Հայաստանի Հանրապետության նախագահի ս. թ. մարտի 23-ի հրամանագրով 1994 թ. հոկտեմբերի 6—11-ը հայտարարվել էին Երևանի պետական համալսարանի 75-ամյա հոբելյանի անցկացման օրեր: Այդ առթիվ ստեղծված հոբելյանական հանձնաժողովը (նախագահ՝ Լ. Տեր-Պետրոսյան) նախապատրաստական զգալի աշխատանքներ կատարեց գիտամշակութային այդ մեծ տարելիցը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Տպագրվեցին հոբելյանին նվիրված գրքեր ու ժողովածուներ, պատրաստվեց «Երևանի պետական համալսարան-75» հուշամեդալը (արծաթից և ոսկեզօծ), ինչպես նաև այլ հուշանվերներ:

Հոբելյանական հանդիսությունները համալսարանում սկիզբ առան պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների գիտական նստաշրջանով, որը տևեց սեպտեմբերի 21—30-ը: Համալսարանական գիտական այդ մեծ համաժողովում վերջին մի քանի տարիների ընթացքում կատարած իրենց գիտական հետազոտությունների արդյունքների հաշվետրվությամբ հանդես եկան պրոֆեսորադասախոսական կազմի լավագույն ներկայացուցիչները ու ասպիրանտների մի զգալի մասը: Նրանց 39 ենթաճյուղերում տասն օրվա ընթացքում լավեցին 500-ից ավելի զեկուցումներ ու հարցազրույթներ՝ նվիրված ֆիզիկամաթեմատիկական, բնական, հումանիտար ու հասարակա-

կան գիտությունների զարգացման տարբեր խնդիրներին: Մասնակիցների շրջանում հատկապես լայն հետաքրքրություն առաջացրին այն զեկուցումներն ու հաղորդումները, որոնք վերաբերում էին հայագիտության, հայոց պատմության, հայոց լեզվի ու գրականության և դրանց հարակից հարցերին:

Հոբելյանական գիտական նստաշրջանից հետո, հոկտեմբերի սկզբներին, համալսարանում անցկացվեցին տարբեր բնույթի ուսանողական միջոցառումներ, որոնց հաջորդեց հոկտեմբերի 10-ի առավոտյան համալսարանի հրապարակում տեղի ունեցած համահամալսարանական մեծ տոնահանդեսը: Այդ նույն օրը հանդիսավոր պայմաններում շահագործման հանձնվեց նաև համալսարանի գիտական գրադարանի նորակառույց շենքը, անվանակոչվեցին մի շարք լսարաններ ու կաբինետներ, համալսարանի պատմության թանգարանում տեղի ունեցավ նոր նյութերի ցուցադրություն, բացվեց համալսարանական ինքնուսուցանողական կենտրոնի ստեղծագործությունների ցուցահանդես և այլն:

Նույն օրվա երկրորդ կեսին համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտական խորհրդի ղեկավարված միսո, որին, խորհրդի անդամներից բացի, մասնակցում էին պրոֆեսորադասախոսական կազմի և ուսաճողության ներկայացուցիչներ, համալսարանի տարբեր տարիների շրջանավատներ և վառական աշխատողներ, հանրապետությունում հավատարմագրված դեսպանատների աշխատակիցներ, հյուրեր արտասահմանյան մի շարք երկրներից ու Սփյուռքից:

Նիստո քաթեով՝ գերխորհրդի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ասաց, որ Երևանի պետական համալսարանի 75-ամյակին նվիրված հանդիսությունները շարունակվում են, մենք այժմ, տոնական այս մթնոլորտում, կատարելու ենք մեր համալսարանի բարձր պարզևի՝ «Գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալի հանձնման և պատվավոր կոչումների շնորհման հանդիսավոր արարողությունը, որից հետո ողջույնի խոսքով հանդես կգան մեր մեծարգո հյուրերը:

Անուհետև խորհրդի գիտաբարտոլապ Արամ Սիմոնյանը ներկայացրեց ԵՊՀ գիտախորհրդի 1994 թ. սեպտեմբերի 22-ի որոշումով՝ ՀԳԱԱ անադեմիկոսներ, մեր ժամանակի մեծանուն գիտնականներ, Երևանի սետական համալսարանի նախկին ռեկտոր, պատմության ԼՄԻՄԻ Գեղամի Կենեսուհից և տեսական Ֆիզիկայի ամենունի ստոֆեսոր Գառեոհիկ Սերոբի Սահակյանից հիշատակում ստորգնատրելու մասին:

Ելույթ ունեցողը հակիրճ կերպով ներկայացրեց պարզևատրվածների կյանքն ու գիտամանկավարժական և հասարակական գործունեությունը:

Սկրուիչ Գեղամի Ներսիսյանը, ասաց նա, ծնվել է 1910 թ. Աշտարակի շրջանի Փարպի գյուղում, 1931-ին ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, աշխատանքի է անցել ԼԿԿ կուսպատմության ինստիտուտում, ապա՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքի (Արմֆան) պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտում: Վերջինիս տնօրինությունն է ստանձնել 1940-ից: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Վերադառնալով՝ նշանակվել է ՀԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ (1944—1946 թթ.) և այնուհետև ԼԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտորի տեղակալ (1946—1950 թթ.), 1950—62-ին եղել է ՀԳԱ փոխպրեզիդենտ, իսկ 1962—66-ին՝ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1958 թ. հիմնադրվել է Հայաստանում և արտասահմանում գիտական մեծ հեղինակություն վայելող ՀԳԱ «Պատմաբանասիրական հանդեսը», որի անփոփոխ խմբագիրն է մինչև օրս:

Մ. Ներսիսյանը Երևանի համալսարանի նետկապված է եղել դեռևս 1930-ական թվականներից, ուր կատարել է դասախոսական բեղմնավոր աշխատանք, եղել ամբիոնների վարիչ, իսկ 1966—77 թթ. ստանձնել է համալսարանի ռեկտորի պարտականությունները: Այդ ընթացքում նրա ջանքերով համալսարանում ամուր հիմքերի վրա են դրվել ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքները, բացվել են մի շարք նոր ֆակուլտետներ ու ամբիոններ, մասնագիտություններ ու մասնագիտացումներ: Համալսարանում 1968 թ. գործող հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիան և ստեղծվել է Մ. Ներսիսյանի նախաձեռնությամբ:

Մ. Ներսիսյանի ռեկտոր եղած շրջանում Երևանի համալսարանում մեծ վերելք է ապրել նաև գրահրատարակչական գործը. լույս են տեսել բազմաթիվ արժեքավոր դասագրքեր ու մեագորություններ, բառարաններ ու ուսումնական ձեռնակներ, հիմնադրվել են «Բանբեր Երևանի համալսարանի», «Երևանի համալսարան» (ներկայումս՝ «Հանդես Երևանի համալսարանի»), «Երիտասարդ գիտաշխատող» հանդեսները:

Մ. Ներսիսյանը 1977-ից առ այսօր ՀԳԱԱ պատմության ինստիտուտի հայ-ուսական հարաբերությունների պատմության բաժնի վարիչն է և գիտահետազոտական լայն գործունեություն է ծավալում հիմնականում ու-

սումնասիրելով հայ ժողովրդի սզգային-սզատագրական շարժումների շլուսաբանված հարցերը XIX դարում և XX դարի առաջին քստորդում: Նա ուսումնասիրել է նաև XVIII դարի Չչակոթային կապերի պատմությունը, 1812 թ. Հայրենական պատերազմին կովկասի ժողովուրդների մասնակցությունը, Անդրկովկաս աքսորված դեկաբրիստների կյանքը և գործունեությունը: Նրա գրչին են պատկանում հարյուրից ավելի գիտական աշխատություններ, որոնցից մի քանիսը հիմնարար մեծագորություններ են: Հայ նորագույն պատմության մեջ առաջինը նա է սնդրադարձել Անդրկովկասի նարողնիկական իւրմբակների գործունեությանը և արևմտահայերի ազատագրական շարժումներին, այդ թեմայով 1946-ին պաշտպանել է դոկտորական թեզ, 1947-ին նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում, 1950-ից՝ ՀԳԱ իսկական անդամ է, իսկ 1961 թ.՝ գիտության վաստակավոր գործիչ: Նա է կազմել ու խմբագրել «Հայերի գեոցիոլոգ Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն, որն ունեցել է ռուսերեն երկու հրատարակություն (Երևան, 1966 և 1983), վերջին հրատարակությունը՝ լրացված ու բարեփոխված, նորերը թարգմանվեց ու տպագրվեց նաև հայերեն (Երևան, 1992): Մ. Ներսիսյանը կազմել ու խմբագրել է բազմաթիվ կոլեկտիվ աշխատություններ, ժողովածուներ և ուսումնական ձեռնարկներ, այդ թվում և «Հայ ժողովրդի պատմություն» միատորայակը, որն ունեցել է դարձյալ երկու հրատարակություն (Երևան, 1972 և 1981):

Մեծավաստակ գիտնականը ծավալել է նաև հասարակական լայն գործունեություն, եղել ՀԿԿ Կենտկոմի և Երքաղկոմի սնդամ, Հայաստանի, ապա և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի շարք գումարումների դեպուտատ: Նա պարզևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: Մ. Ներսիսյանին Երևանի պետական համալսարանի բարձրագույն պարզկին արժանացնելը նրա բազմամյա գիտականակավարժական և հասարակական գործունեության, ինչպես և համալսարանում տարիների ժրաջան աշխատանքի գնահատմբն է:

Այնուհետև բեմ է բարձրանում ծեռուհագրո գիտնականը և համալսարանի ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի ձեռքից ընդունելով բարձր պարզև, ասում է. «Իմ խորին շնորհակալությունն են հայտնում Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի բոլոր սնդամներին, ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին, որոնք հարկ են համարել ինձ պարզևտրելու այս բարձր մեդալով: Խորապես ոգրցված են և իմ շնորհակալությունն են հայտնում բոլորին: Ես հոգով ու էությանբ երկար տարիներ կապված եմ եղել համալսարանի հետ և այսօր համալսարանի դեկավատությանը,

պրոֆեսորադասախոսական կազմին, ողջ ուսանողությանը ցանկանում եմ անպատ եռանդ ու կամք՝ հաղթահարելու մեր ժողովրդին բաժին ընկած այս ժամանակավոր դժվարությունները և ապահովելու մեր մայր կրթօջախի հետագա ծաղկումն ու զարգացումը»:

Հայ խոշորագույն ֆիզիկոս-տեսաբան Գորզևն Եերոքի Սահակյանը ծնվել է 1913 թ. Անիի շրջանի Սոգոթյու (այժմ՝ Սաոնադրյուր) գյուղում: 1939-ին ավարտել է Երևանի համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը, որից հետո զորակոչվել է բանակ և մասնակցել Հայրենական պատերազմին: Այնուհետև Մոսկվայում ավարտել է ասպիրանտուրան և տեսական ֆիզիկայի գծով պաշտպանել թեկնածուական թեզ: Վերադաոնալով Հայաստան, նա իր ողջ կյանքը կապել է Երևանի պետական համալսարանի հետ: 1963 թ. պաշտպանել է դոկտորական թեզ: 1964-ից պրոֆեսոր է, 1982-ից՝ ՀԳԱԱ ակադեմիկոս, իսկ 1970-ից գիտության վաստակավոր գործիչ: 1951—1985 թթ. եղել է տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, այժմ նույն ամբիոնի պրոֆեսոր է, իսկ 1967—1972-ին՝ միաժամանակ եղել է նաև ֆիզիկայի ֆակուլտետի դեկան:

Գ. Սահակյանի աշխատանքները վերաբերում են տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկային, ձգողականության տեսությանը, այլասերված գերխիտ պլազմային և աստղերի ֆիզիկային: Ներմուծել է նուկլոնների ֆորմֆակտորի գաղափարը, ուսումնասիրել լիցքերի բաշխումը միջուկում, ցույց տվել, որ էլեկտրոնների առաձգական ցրումը մեծ անկյունների տակ հնարավորություն է տալիս հետազոտելու նուկլոնների ներքին կառուցվածքը: Գ. Սահակյանը Վ. Համբարձումյանի հետ համատեղ աստղաֆիզիկայի նոր ուղղության՝ գերխիտ աստղերի ֆիզիկայի հիմքն են դրել: Մեծահոշակ գիտնականները ապացուցել են, որ միջուկային և ավելի մեծ խտությունների դեպքում նյութը տարրական մասնիկներից բաղկացած գազ է, որում մեծապես գերակշռում են բարիոնները, և կառուցել են գերխիտ աստղային կոնֆիգուրացիաների մոդելներ: Նրանց հայտնաբերել են նաև հարաբերականությանը ընդհանուր տեսության նոր էֆեկտ՝ զանգվածի աննորմալ պակասողը:

Գ. Սահակյանը մեծ ավանդ է ներդրել Հայաստանում տեսական ֆիզիկայի զարգացման և գիտական կարգերի պատրաստման գործում: Նա համարվում է Հայաստանում աստղաֆիզիկայի նոր ուղղության՝ նեյտրոնային աստղերի ֆիզիկայի հիմնադիրը: Նա արժանացել է ՀԳԱԱ վաստակագրի (1978), պարզևտրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով, հեղինակ է հարյուրավոր գիտական աշխատությունների ու մի քանի դասական մեծագորությունների:

Երևանի պետական համալսարանի բարձ-

րագույն պարզեցնել Գ. Սահակյանն արժանանում է իր բազմամյա բեղմնավոր գիտամանկավարժական և հասարակական գործունեության համար:

Պրոֆ. Գ. Սահակյանն, ընդունելով մեղալուծ, իր շնորհակալական խոսքում նշեց, որ ինքը արժանացել է մեծ պատվի, որի համար իր խորին երախտագիտությունն է հայտնում համալսարանի՝ ղեկավարությանն ու գիտխորհրդի անդամներին:

«Ելք 1948 թ. ես վերադարձա քանակից,— ասաց նա,— իմ միակ երազանքն այն էր, որ ես կարողանամ աշխատել համալսարանում: Իմ մտքով երբեք չէր անցնում, որ ես կարող էի պրոֆեսոր դառնալ և մնալ Երևանի պետական համալսարանում, պաշտոն զբաղեցնել և դառնալ գիտական մեծ խնդիրների լուծման մասնակից: Սակայն ես այդ բանին հասա իմ մեծ աշխատասիրությամբ և տքնանքով և այն մեծ հոգատարության շնորհիվ, որով ես շրջապատված եմ եղել իմ գործընկերների կողմից: Ես այսօր խորապես շնորհակալ եմ, որ իմ տարիների գիտական վաստակը արժանանում է այսպիսի բարձր գնահատականի: Այսուհետև ևս ես կաշխատեմ ամեն ինչ անել հանուն համալսարանական կրթության ու գիտության զարգացման»:

Մեղավների հանձնումից հետո տեղի ունեցավ պատվավոր կոչումների շնորհման արարողությունը: Գիտքարտուղար Ա. Սիմոնյանը իր հաղորդման մեջ նշեց, որ դարձյալ գիտխորհրդի նույն որոշմամբ Երևանի համալսարանի պատվավոր դոկտորի գիտական տիտղոսին են արժանացել մի շարք արտասահմանյան գիտնականներ և ազգային-մշակութային ու հասարակական գործիչներ: Նրանք են՝ Հայկական համընդհանուր բարեգործական միության պատվավոր նախագահ Ալեք Մանուկյանը, նույն միության նախագահ Լուիզ Սիմոն Մանուկյանը, հասարակական-քաղաքական գործիչ Քերոլայն Քոքսը, Գալուստ Գյուլբենկյանի անվան ֆոնդի խորհրդի անդամ, Լիսաբոնի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Գյուլբենկյանը, Ռուսաստանի ակադեմիայի թղթ. անդամ, Մոսկվայի համալսարանի ուկրաինական Վիկտոր Սադոլնիչին, Բրաունի համալսարանի պրեզիդենտ Վարդան Գրիգորյանը, Ռենսելի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր Ոսկան (Վազգեն) Պարսեղյանը, Կորնելի համալսարանի աստղաֆիզիկայի բաժանմունքի վարիչ, տիեզերական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Երվանդ Թերզյանը, Փարիզ-7 համալսարանի պրոֆեսոր, Պաստերի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Դենիս Պոլյանը, Կալիֆորնիայի համալսարանի Արևելքի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, Հայաստանի ամերիկյան համալսարանի Շախագախ Միհրան Աղրաբյանը, Մանգլեշին-3 համալ-

սարանի Միջին դարերի պատմության ամբիոնի պրոֆեսոր Ժիրայր Դեղեյանը, եկեղեցական գործիչ, աստվածաբանության և կրոնագիտության հայտնի մասնագետ, արքեպիսկոպոս Ծախե Աճեմյանը:

Այնուհետև Ռ. Մարտիրոսյանը «ԵՊՀ պատվավոր դոկտորի» դիպլոմները հանձնում է նրանց:

Գիտական այդ բարձր աստիճանին արժանացած և նիստին մասնակցող հյուրերը՝ Ժ. Դեղեյանը, Լ. Ս. Մանուկյանը, Ռ. Հովհաննիսյանը, Մ. Աղրաբյանը և Ծախե արքեպիսկոպոս Աճեմյանը իրենց խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեցին այդ բարձր տիտղոսին արժանանալու համար, հույս հայտնեցին, որ իրենք ամեն կերպ կընդաօնեն Հայաստանի մայր բուրի ծաղկման ու բարգավաճման գործին:

Ներկաների կողմից շերտորեն ընդունվեցին նաև Երևանի համալսարանի հոբելյանի առթիվ ասված ողջույնի ու շնորհավորանքի խոսքերը: Առաջինը հանդես եկավ համալսարանի ավագագույն շրջանավարտ, ՀԳԱԱ թղթակից անդամ, անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը:

«Ես այսօր հպարտ եմ,— ասաց նա,— որ Երևանի համալսարանի բազմաթիվ շրջանավարտների անունից պետք է ողջույնի խոսք ասեմ: Այս հանդեսը միայն մեր հանդեսը չէ, այլ աշխարհասփյուռ հայության լույսի ու հույսի մեծ տոնն է: Հանձինս այս հոբելյանի, կարծես թե մենք 1988 թ. աղետալի երկրաշարժից և մեր երկրի գլխով անցած բազմաթիվ փորձություններից հետո կրկին հունի մեջ ենք մտնում, վերակենդանանում և վերափաստավորվում: Մենք 20-րդ դարի փոթորիկների բերանն ընկած ժողովուրդ ենք: Սակայն մենք ոչ մի փոթորկից չենք սարսել ու ապրել ենք միշտ մաքառելով, մեր հոգու շերտությունն հանձա ուրիշներին տալով: Այն վաստակը, որ համալսարանական սերունդները ունեցել են անցած 75 տարիների ընթացքում, մեծ նվիրումի ու աշխատանքի արդյունք է: Այդ է վկայում մեր համալսարանը, որի հազարավոր սաները իրենց կյանքն ու աշխատանքն են նվիրել Հայաստանի շենացման ու բարգավաճման գործին: Մենք մշակույթ սիրող ու հարգող ժողովուրդ ենք, և առանց համաշխարհային մշակույթի վրա իր շեշտերը դնելու չի կարող ապրել մեր ժողովուրդը»:

Վերջում Ս. Կապուտիկյանն արտասանեց իր ստեղծագործություններից մեկը:

Աթենքի ազգային տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Նիկոլաոս Ուոուզոլուն, իր ողջույնի խոսքում նշեց, որ ինքը պարտավորված է Երևանի համալսարանի 75-ամյակի առթիվ նրա կոչելիտիվին հաղորդելու հույս ժողովրդի, ինչպես և Հունաստանի բոլոր համալսարանների կողմից հոված շնորհագոր-

րանքներն ու բարեմաղթանքները: Նա Աշեց, որ այսօր Հայաստանի շատ բուհեր, այդ թվում և Երևանի համալսարանը, լայն կապեր են հաստատել Հունաստանի բուհերի հետ և շուտով դրանք կտան իրենց ցանկալի արդյունքները:

«Թույլ տվեք Լեոնային Ղարաբաղի Հանրապետության համալսարանի կոլեկտիվի և Արցախի մտավորականության, ողջ արցախահայության, ինչպես նաև այդ լեոնաշխարհը պաշտպանող ազատամարտիկների անունից սրտանց շնորհավորել մեր մայր կրթօջախի հոբելյանը,— իր ողջույնի խոսքում ասաց տեղի նորաստեղծ համալսարանի ռեկտոր Բ. Դավթյանը:— Արցախի ժողովուրդը գիտե,— շարունակեց նա,— որ ձեր շրջանավարտներից շատերը, գրիչը զենքով փոխարինած, կովում են մեր հողի ազատության համար: Դրա համար մենք պարտական ենք Երևանի պետական համալսարանին»:

Արխագիայի պետական համալսարանի ռեկտոր Գվարամիա Ալեքո Ալեքսեևիչը, հոբելյանի առթիվ ողջունելով Երևանի համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվին, իր ելույթում անդրադարձավ արխագ և հայ ժողովուրդների բարեկամության ակունքներին: Նա Աշեց, որ այդ բարեկամության առավատչյան է նաև այն, որ այսօր իրենց հետ կողք կողքի ապրում են 80 հազարից ավելի հայեր, որոնք նույնպես պայքարում են իրենց ազատության ու անկախության համար: Նրանցից շատերը գոհվեցին հանուն Արխագիայի անկախության, և արխագ ժողովուրդն այսօր գլուխ է խոնարհում նրանց հիշատակի առջև: Ելույթ ունեցողն այնուհետև ասաց, որ Արխագիայում ներկայումս գործում են 46 հայկական դպրոցներ, մշակութային մի շարք հաստատություններ, Աշեց նաև, որ Արխագիայի համալսարանն ունի հայկական բաժին, այնտեղ գործում են հայոց եկեղեցիներ և այլն: «Ազատագրված Արխագիան դեռ ավելի լավ պայմաններ կ'ստեղծի արխագահայության համար, նրա տնտեսության ու մշակույթի ծաղկման համար: Դեռ կզան լավ ժամանակներ, և մենք ցնծությամբ ու ավելի մեծ շուքով կհջենք Երևանի համալսարանի գալիք հոբելյանները»,— վերջում բարեմաղթեց ռեկտորը:

Հանրապետության մայր բուհի հոբելյանը ողջունեցին նաև Երևանի պետական բժշկական ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Վ. Հակոբյանը, Ժողովրդական տնտեսության ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Գր. Կիրակոսյանը, օտար լեզուների ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Ի. Առաքելյանը, գեղարվեստից ինստիտուտի ռեկտոր Ա. Իսաբեկյանը, Երևանի քաղաքահրդյի գործկոմի նախագահ Վ. Խաչատրյանը, Իջևանի շրջործկոմի նախագահ Զ. Ա. Անանյանը և նույն շրջանում գործող Երևանի համալսարանի մասնաճյուղի տնօրեն, պրոֆ.

Հ. Կարայանը: Նրանք համալսարանին հանձնեցին նաև գեղեցիկ հուշանվերներ:

Երևանի համալսարանի հոբելյանը պիտուքահայ շրջանավարտների անունից ողջունեց Միշիգանի համալսարանի պրոֆեսոր Գևորգ Բարդակչյանը և ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանին հանձնեց այդ համալսարանի ռեկտորի շնորհավորագիրը: Այնուհետև պատմեց Երևանի համալսարանում իր ուսանած տարիների իրադարձություններից և վկայակոչեց իր դասախոսների ջանդիր աշխատանքը՝ որակալ: մասնագետներ պատրաստելու գործում: Իսկ ամերիկահայ իրավաբանների միության անունից ելույթ ունեցավ Արմեն Հովհաննիսյանը (Ռիչմոնդ Հովհաննիսյանի որդին) և ռեկտորին հանձնեց այդ միության կողմից պատրաստված մի հուշատպիստակ:

Դիմելով ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանին, Ֆրանսիայի Մոնպելյե քաղաքի համալսարանների պատվիրակության ղեկավար, Մոնպելյե—2 համալսարանի պատվավոր նախագահ, պրոֆ. Ժան Լագարիգո ասաց. «Մեծ պատիվ է մեզ համար՝ լինել ձեր կողքին և ձեզ հետ միասին առնել Երևանի համալսարանի 75-ամյակը: Այստեղ է գտնվում մեր պատվիրակությունը, որը հիացած է ձեր համալսարանի հաջողություններով: Ըստ գեղեցիկ է, որ գիտամշակութային սերտ կապեր են հաստատվել մեր համալսարանների միջև: Պետք է մենք ամեն ինչ անենք, որպեսզի ավելի ընդլայնվեն այդ կապերը»:

Այնուհետև Ժան Լագարիգո Ռ. Մարտիրոսյանին հանձնեց Մոնպելյեի համալսարանի 700-ամյակին նվիրված մի շքեղ հրատարակություն, ինչպես նաև երկու համալսարանների բարեկամությունը խորհրդանշող մի հուշամեդալ:

«Ես մի հաճելի պարտականություն եմ ունենում կատարելու,— վերջում ասաց նա:— Ֆրանսիայի կառավարությունը որոշել է Երևանի համալսարանի միջազգային կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մաթևոսյանին պարգևատրել կառավարական շքանշանով՝ նկատի ունենալով նրա երկարամյա ծառայությունները Հայաստանի և Ֆրանսիայի միջև ակադեմիական և մշակութային կապերի զարգացման գործում»:

Գիտխորհրդի նիստին մասնակցում էին և վերջում ելույթ ունեցան Հայաստանում Եգիպտոսի գործերի ժամանակավոր հավատարմատար Ահմադ Ֆուադ Ռասսյանը և Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յակովոս Սպեցիոսը: Նրանք ջերմորեն շնորհավորեցին բոլոր ներկա գտնվողներին, ողջ հայ ժողովրդին՝ գիտամշակութային մեծ տոնահանդեսի առթիվ և Երևանի համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվին ցանկացան նորանոր հաջողություններ:

Նիստը եզրափակվեց գիտքարտուղար Ա. Միմոնյանի հաղորդումով, ուր Աշեց, որ Երև-

վանի պետական համալսարանի 75-ամյա հոբելյանի առթիվ ռեկտորի անունով ստացվել են հարյուրավոր հեռագրեր ու նամակներ: Նա հրապարակեց դրանցից մի քանիսը:

Երևանի պետական համալսարանի պատմությանը, միջազգային կապերին և բարձրագույն կրթության համակարգի վերափոխումներին էր նվիրված միջազգային գիտաժողովը, որը տեղի ունեցավ մեծ դահլիճում, հոկտեմբերի 11—12-ին: Այն ներածական խոսքով բացեց համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, և ինքն էլ կարդաց առաջին զեկուցումը՝ նվիրված Երևանի պետական համալսարանի միջազգային կապերին և ներկայիս համալսարանական համագործակցության կատարելագործման ուղիներին:

Իր զեկուցման մեջ Ռ. Մարտիրոսյանը ընդգծեց, որ Երևանի համալսարանի միջազգային կապերը սկսվել են նրա հիմնադրման առաջին իսկ տարիներից և շարունակվում են մինչև այսօր: Սկզբնական շրջանում այդ կապերը դրսևորվել են այն բանով, ասաց նա, որ եվրոպական շատ համալսարաններից հրավիրվել են հայագի անվանի գիտնականներ, ովքեր ուսումնական գործում ներդրեցին միջազգային չափանիշներին համապատասխանող ծրագրեր և բարձրագույն դպրոցի աշխատանքների կազմակերպման առաջավոր փորձը: Միաժամանակ նրանց կապերի շնորհիվ եվրոպական և այլ վայրերի համալսարանների հետ ակադեմիական փոխանակություն սկսվեց, սկիզբ դրվեց գիտական համատեղ աշխատանքների և ճամակագրության: Դրա հետ մեկտեղ, կրթություն ստանալու նպատակով, 1926—27 ուստարում Երևանի համալսարան եկան առաջին սփյուռքահայ երիտասարդները: Սակայն դա տևեց ընդամենը մեկ-երկու տարի, որից հետո ընդհանրապես կտրվեցին արտաքին աշխարհի հետ եղած այդ կապերը: 1930-ական թվականների սկզբից, մղձավանջային այդ տարիներին, միջազգային կապեր և ազատասիրության մղղումներ ունենալու մեղադրանքով հետապնդողումների և հայաժանգների զոհ դարձան հարյուրավոր համալսարանականներ, այդ թվում միայն 12 ռեկտոր:

1956 թ. սկսած վերականգնվում են Երևանի համալսարանի միջազգային կապերը, այնուհետև նշեց զեկուցողը: Սակայն այդ կապերը ղեկավարվում էին ԽՍՀՄ Կենտրոնական մարմինների կողմից և հաշվի չէին առնվում տվյալ բուհի առանձնատնտեսություններն ու պահանջները: Այդուհանդերձ, այդ շրջանից սկսած աճում է սփյուռքահայ ուսանողների թիվը, որը և հիմք է դառնում 1961 թ. արտասահմանյան քաղաքացիների միասնադաստակական ֆակուլտետի ստեղծման հա-

մար: Այդ ֆակուլտետի գոյությունը հետագայում նպաստում է միջազգային կապերի զարգացմանը: Այստեղ ուսումնառության են գալիս ոչ միայն սփյուռքահայերը, այլև մեծ թվով այլազգիներ, որոնց ընտրությունը կատարվում էր դարձյալ Կենտրոնի կողմից՝ հիմք ունենալով նրանց քաղաքական ու գաղափարական նկատառումները:

Միջազգային կապերի վրա Կենտրոնի կողմից այդ հսկողությունը տևում է մինչև 1970-ական թվականների կեսերը: Այդ ընթացքում վարվում էր այնպիսի քաղաքականություն, որպեսզի, այսպես կոչված, ծայրամասային համալսարանները չկարողանային կապեր հաստատել կապիտալիստական առաջավոր երկրների համալսարանների հետ, այլ ունենային սահմանափակ շփումներ միայն սահմանակից կամ սոցիալիստական երկրների երկրորդական համալսարանների հետ:

Երևանի պետական համալսարանի միջազգային կապերը, նշեց Ռ. Մարտիրոսյանը, լայն թափ ստացան 1980-ական թվականներին սկսած և առավել հաջողությամբ հասան 1986-ից հետո: Միջազգային համագործակցության ողջ ընթացքում Երևանի համալսարանն ամենատարբեր բնույթի կապերի մեջ է եղել աշխարհի 81 երկրների կրթական հաստատությունների հետ: Անցած ժամանակաշրջանում համալսարանում սովորել են 6250 օտարերկրացիներ աշխարհի 78 երկրներից, որոնցից 2420-ը եղել են սփյուռքահայեր: Մեր համալսարանն ավարտել, ինչպես նաև թեկնածուական ու դոկտորական թեզեր են պաշտպանել 620 օտարերկրացիներ, որոնցից 330-ը սփյուռքահայեր են: Թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել 58 արտասահմանցիներ, որոնցից 44-ը սփյուռքից են: Սփյուռքահայերից դոկտորական դիսերտացիաներ են պաշտպանել 3-ը, 3 հոգի էլ նախապատրաստվում են պաշտպանելու: Արտասահմանյան ուսանողների առավելագույն թիվը 1986 թ. կազմել է 367 հոգի:

Երևանի համալսարանը Լյուբլինի (Լեհաստան) և Բրատիսլավայի (Չեխոսլովակիա) համալսարանների հետ անմիջական համագործակցության մեջ է մտել 1979-ից, այնուհետև ընդլայնվել են կապերը: Այսօր մենք բարեկամական ու գիտամշակութային համագործակցություն ենք սկսել աշխարհի 24 երկրների 60 համալսարանների հետ: Դրանցից կարելի է նշել Ամերիկայի, Եվրոպայի, Ասիայի, Միջին և Մերձավոր Արևելքի մի շարք երկրների առաջատար համալսարանները: Մենք նորովի ենք սկսելու հաճախում ենք նախկին կապերը Ռուսաստանի և ԱՊՀ երկրների առաջատար բուհերի ու համալսարանների հետ:

Ներկայումս, շարունակեց զեկուցողը, որպես միջազգային լայն կապեր ու համբավ ունեցող գիտակրթական հաստատություն, Ե-

րևանի պետական համալսարանը ճանաչվել է Համալսարանների միջազգային ասոցիացիայի Եվրոպայի ինքնավար համալսարանների ինստիտուտի և եվրոպական համալսարանների ասոցիացիայի լիիրավ անդամ: Մեր համալսարանն այժմ մասնակցում է միջազգային 25 կազմակերպությունների և հիմնադրամների հետ համագործակցության և փոխանակությունների ծրագրերին:

Այս ամենը, իր զեկուցման վերջում ասաց ակադ. Ռ. Մարտիրոսյանը, տարիների ջանադիր աշխատանքի արդյունք է: Մենք այսուհետև ևս պետք է շարունակենք զարգացնել ու ընդլայնել մեր կապերը աշխարհի շատ առաջատար համալսարանների հետ: Դրանով մենք կնպաստենք մեր մայր համալսարանի հեղինակության բարձրացմանը միջազգային ասպարեզում: Այդ նպատակն է հետապնդում նաև Երևանի համալսարանի ներկա հոբելյանի նշումը:

Այնուհետև ԵՊՀ պատմության թանգարանի տնօրեն, պրոֆ. Լ. Ղարիբջանյանը հանդես եկավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման և նրա անցած ուղու պատմությանը նվիրված զեկուցումով: Հեղինակը նոր փաստերով ու վավերագրերով ներկայացրեց հատկապես Հայաստանի համալսարանի 1919—20 թթ. գործունեությունը, ցույց տվեց այն փոխարի առաջընթացը, որ նա ունեցել է հետագա 75 տարիների ընթացքում Հայաստանում ու նախկին ԽՍՀՄ-ում:

Սփյուռքահայ նշանավոր պատմաբան, պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը իր զեկուցման մեջ բազմաթիվ նոր փաստեր հրապարակեց 1918—1920 թթ. Հայաստանի առաջին Համալսարանի հիմնադրման վերաբերյալ: Իսկ Միշիգանի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, պրոֆ. Դենիս Փափազյանի զեկուցումը նվիրված էր «Բարձրագույն կրթությունը Հայաստանում և հնարավոր միջազգային կապերը արտասահմանցիների հետ» թեմային:

Հունաստանի և Հայաստանի համագործակցության պատմական անցյալին և ներկա իրականությանն էր նվիրված Աթենքի ազգային տեխնիկական համալսարանի պրոֆեսոր, համակարգիչների հաղորդակցության համակարգերի ինստիտուտի տնօրեն Նիկոլաոս Ուզունճոլուի զեկուցումը, որի մեջ նա վերհանեց երկուստեք կարևոր ու շահավետ մի շարք խնդիրներ, որոնց լուծումը կտա մեծ արդյունք երկու հիմնվուրց երկրների համար: Իսկ Խուսիայի համալսարանական համագործակցության ինստիտուտի տնօրեն Մասինո Կանելյան իր զեկուցման մեջ անդրադարձավ միջհամալսարանական համագործակցության զարգացման ժամանակակից խնդիրներին:

Գիտաժողովում հետաքրքիր զեկուցումներ

րով հանդես եկան ԱՄՆ-ից՝ սփյուռքահայ գիտնականներ, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ, պրոֆ. Միհրան Ադաբաբյանը («Դրական քայլեր դեպի գերազանց նաև հավասարակշռված հարաբերություններ կրթության ոլորտում»), Բրանդես համալսարանի փոխտնօրեն և գլխավոր խորհրդակցական Թամար Հաջյանը («Հայաստանի բարձրագույն կրթության վարչական բարեփոխումների գործընթացը 1919 թվականից մինչև 21-րդ դարը»), Քլարքսոն համալսարանի պրոֆեսոր Լեվին Միմեթյանը («Ակադեմիական ծրագրերի տեխնիկական գերազանցությունը և երկարակետությունը»), Երևանի համալսարանի նախկին սան, այժմ Միչիգանի համալսարանի հայոց լեզվի և գրականության Մարի Մանուկյանի հիմնադրամի պրոֆեսոր Գևորգ Բարդակչյանը («Երևանի պետական համալսարանը 1980-ական թվականներին մի քանի հետահայաց մտքեր», «Մաշտոց» քոլեջի նախագահ Կարպիս Տեր-Եղիյանը («Երևանի պետական համալսարանի և ամերիկյան համալսարանների կրթական ու վարչական հաստատությունների միջև փոխհարաբերությունների հետևանքը»): Հայաստանում ֆիզիկայի զարգացման և հանրապետության պաշտպանունակության ամրապնդման խնդիրներին էր նվիրված Լոս Անջելեսի համալսարանի պրոֆեսոր, ֆիզիկոսների հայկական ընկերության նախագահ Զավեն Կիրակոսյանի զեկուցումը:

Գիտական աշխույժ հետաքրքրությունն առաջացրին նաև ֆրանսիական պատվիրակության անդամների գիտաժողովում կարդացած զեկուցումները: Պատվիրակության ղեկավար, Մոնպելյե-2 համալսարանի պատվավոր նախագահ Ժան Լազարիգի զեկուցումը նվիրված էր Ֆրանսիայում համալսարանական կրթության համակարգին: Նրանում հեղինակը հենվելով բազմաթիվ փաստերի ու տվյալների վրա, ցույց տվեց այդ երկրի համալսարանների ունեցած մեծ դերը երկրի հասարակական ու տնտեսական կյանքում: Նա հատկապես անդրադարձավ համալսարանական կրթության նշանակությանը Ֆրանսիայի ընդհանուր առաջընթացի գործում: Այնուհետև զեկուցողը Մոնպելյեի համալսարանների օրինակով խոսեց Ֆրանսիայի մի շարք համալսարանների ծրագրերի, դասավանդման մեթոդների ու պատրաստած կադրերի մասին:

Մոնպելյե-1 համալսարանի միջազգային կապերի ղեկավար Ժան Քաստելն իր զեկուցման մեջ անդրադարձավ տարբեր համալսարանների հետ ունեցած իրենց բազմակողմանի կապերին: Նա հատկապես կանգ առավ Երևանի պետական համալսարանի և Մոնպելյեի համալսարանների միջև ստեղծված գիտամշակութային ու բարեկամական կապերի վրա, ցույց տվեց, որ այդ կապերը

պետք է համապատասխանեն նաև Հայաստանի ու Ֆրանսիայի գիտական ու տնտեսական ընդհանուր շահերին: Այնուհետև նա անդրադարձավ այդ կապերի նախադրյալներին ու հեռանկարներին, շեշտեց, որ դրանք զարգանում են հիմնականում երկրաբանության, բժշկության, դեղաբանության, պատմության ու լեզվաբանության ասպարեզներում: Համալսարանական այդ կապերը, վերջում եզրակացրեց զեկուցողը, կնպաստեն նաև մեր երկր: Եվրոների միջև ստեղծված բարեկամական ու տնտեսական համագործակցության ամրապնդմանը:

Հետաքրքրությամբ լսվեց նաև նույն պատվիրակությանը անդամ, Մոնպելյե-3 համալսարանի պատմության պրոֆեսոր Ժիրայր Դեդեանի «Մոնպելյե—Երևան միջազգային կապերը XIX դարի վերջերից մինչև մեր օրերը» զեկուցումը: Նախքան երկու համալսարանների միջև ստեղծված կապերի բնութագրմանը անցնելը, զեկուցողն անդրադարձավ պատմական մի բաժնի կարևոր փաստերի, որոնք վկայում էին Հարավային Ֆրանսիայի ու Հայաստանի միջև եղած վաղնջական կապերը: Դեռևս V դարի կեսերին, սաաց նա Հայաստանից Դաշար անունով մի ոմն, գուցե և եկեղեցական գործիչ, ուխտագնացություն է կատարում Ֆրանսիա: Այն վայրը, որ նա կատարե է իր ուխտը, մինչև այսօր է՝ Երևանում կոչվում է Դաշար: Հետագայում Կիլիկյան Հայաստանի ու Մոնպելյեի միջև հաստատվում են առևտրական սերտ կապեր, որոնք աստիճանաբար զարգանում ու լայն թափ են ստանում Խաչակրաց արշավանքների շրջանում (1098—1270), մասնավորապես Լուսինյանների թագավորության օրոք: 1121 թ. Մոնպելյեի մեջ հայ վաճառականներին տրվում են լայն ազատություններ: Ֆրանսիայի հետ ունեցած այդ կապերն ավելի են սերտանում Լյուդովիկոս VII (1187—1189) և այնուհետև հայոց Օշին թագավորի օրոք (1308—1320): Նրանք հովանավորում էին հայ վաճառականներին ավելի լայն առևտրական կապեր հաստատել արևմուտքի հետ, որոնք հետագայում հովանավորվեցին նաև լատինամետ Լեոն Ե-ի թագավորության շրջանում (1320—1342): XVII դարում Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորի (1643—1715) ջանքերով հայ վաճառականները ավելի մեծ արտոնություններ ստացան Հարավային Ֆրանսիայում: Նրանք առևտուր էին անում Միջերկրականի առափնյա բազմաթիվ քաղաքների հետ: Այդ գործում հետագայում լուրջ դեր է խաղում նաև հայազգի ճշամավոր գյուղատնտես Հովհաննես Ալթունյանը (Ժամ Ալթուն, 1709—1774), որն այստեղ էր ընկել մահից մազապործ պատմական Նախիջևանի Ճահուկ գյուղաքաղաքից: Նա, 1729 թ. կորցնելով իր ողջ գերդաստանը, որպես ստրուկ վաճառվել ու

տարվել է Անատոլիա, ուր 14 տարի անշատել է տորոնի դաշտերում: Յուրացնելով վերջինիս մշակության եղանակն ու գաղտնիքները, Հ. Ալթունյանը փախել է Ջյուտոնիա, որտեղից էլ տորոնի սերմերն իր հետ թաքուն (այն երկրից դուրս հանելու համար Օսմանյան Թուրքիայում մահապատիժ էր սահմանված) բերում է Ֆրանսիա՝ Ավիգոն: Այստեղ նրա ջանքերով Եվրոպայում առաջին անգամ տորոնի մշակությունը մեծ զարգացում է ապրում: Ալթունյանի մահից հետո երախտագետ ֆրանսիացիները Ավիգոնում նրա հուշարձան են կանգնեցնում, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ քանդում են ֆաշիստները: Սակայն պատրաստի ավարտից հետո այն նորից վերականգնվում է:

Լետագա ժամանակներում, հատկապես XVIII—XIX դարերում, շարունակեց զեկուցողը, Երևանից, Օւշիից, Գյումրիից, Գանձակից ու Հայաստանի այլ վայրերից, ինչպես նաև Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներից մեծ թվով հայ ուսանողներ են գալիս Հարավային Ֆրանսիա՝ ուսում ստնելու գյուղատնտեսության, բժշկության, տնտեսագիտության գծով: Նրանցից շատերի անուններն այսօր էլ պահպանվում են արխիվային փաստաթղթերում: Մոնպելյեի մեջ գործել է նաև Արմենական, հետագայում՝ Հնչակյան կոնսուլության մասնաճյուղ, որը հրատարակել է թերթեր («Հնչակ»—1887, «Փորձ»—1912 և այլն), ֆրանսիացի մի գիտնական նույնիսկ «Հայոց պատմություն» գիրք է ստեղծել, որը լույս է տեսել ֆրանսերեն:

Մեր օրերում, վերջում սաաց զեկուցողը, Երևանի և Մոնպելյե քաղաքի համալսարանների միջև ուսումնագիտական լայն կապեր են հաստատվել, որոնք, սկիզբ առնելով 1900-ականներից, ավելի լայն ծավալ ստացան 1980-ականների վերջերից: Դրանք դրսևորվում են ուսանողների ու դասախոսների փոխանակության, համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարելու և մշակութային զանազան միջոցառումների ու փոխալցելությունների ձևով:

Ռուսաստանի Դաշնության «Մուպերիալ» ընկերության Ռախազաթ Արկադի Վարդանյանի զեկուցումը նվիրված էր ազգային համախմբման գործում համալսարանական կրթության դերին, իսկ Երևանի համալսարանի զեկուցողների և քջաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռոբեն Հարությունյանը իր զեկուցման մեջ միջազգային համագործակցության փոռնով ներկայացրեց հայերի էկոլոգիական զեկուցողներին:

Հետաքրքրությամբ լսվեց նաև Էջմիածնի ճեմարանի դասախոս Հրաչ Սարգսյանի զեկուցումը, որը նվիրված էր ժամանակակից համալսարանական ծրագրերի մեջ աստվածաբանության և կրոնագիտության դասընթաց-

հերի տեսական հիմունքներին ու գործնական առաջադրանքներին:

Վերջում միջազգային գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց և բարձր գնահատեց Երևանի համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը:

/

Երևանի պետական համալսարանի հոբելյանին նվիրված միջոցառումների խտացումն էր հոկտեմբերի 11-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստը, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Բ. Արարքյանը, Հալախանի Հանրապետության փոխնախագահ Գ. Հարությունյանը, վարչապետ Հ. Գաբրիելյանը, Գերագույն խորհրդի պատգամավորներ, կառավարության անդամներ, ամենապատիվ թորգոս արքեպիսկոպոս Մանուկյանը, աշխարհի տարբեր երկրներից, սփյուռքահայ գաղթօջախներից ժամանած բազմաթիվ հյուրեր, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

Հանդիսավոր նիստը բացեց համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, որից հետո հոբելյանի առթիվ ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը:

Այնուհետև Երևանի պետական համալսարանի անցած ողորմ մասին զեկուցեց ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, որը բազմաթիվ փաստերով ու հավաստի թվական տվյալներով ցույց տվեց այն վիթխարի առաջընթացը, ու ունեցել է Հայաստանի բուհերի առաջնելը իր գոյության 75 տարիների ընթացքում:

Հանրապետության մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը, նրա բոլոր տարիների շրջանավարտներին շերմորեն շնորհավորեցին Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Բ. Արարքյանը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆ. Սարգսյանը, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պրոռեկտոր, պրոֆ. Մ. Մարչենկոն, Լեոնային Ղարաբաղի համալսարանի ռեկտոր Բ. Դավթյանը, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Մ. Աղբաբյանը, Ֆրանսիայի Մոնպելյե-2 համալսարանի պատվավոր նախագահ Ժան Լագարդը, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի պրեզի-

դենտ Յու. Սարգսյանը, Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Ն. Յավրյանը և ուրիշներ: Ելույթ ունեցողները Երևանի պետական համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվին մաղթեցին ուսումնական և գիտական նորանոր նվաճումներ, ստեղծված փառավոր ավանդույթների պահպանում և բազմապատկում:

Հանդիսավոր նիստի վերջում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ գիտության ու կրթության անդաստանում ներդրած բացառիկ ավանդի համար ՀԳԱԱ պատվավոր նախագահ Վիկտոր Համբարձումյանին շնորհվել է «Հայաստանի ազգային թերուսի» կոչում: Ներկաները շերմությամբ ընդունեցին այս որոշումը և աշխարհահռչակ գիտնականի շնորհակալական խոսքը:

Վերջում օպերայի ու բալետի թատրոնի արտիստների, գործիքային կոլեկտիվների և արվեստի վարպետների մասնակցությամբ տրվեց ճոխ համերգ:

Նույն օրը, երեկոյան, համալսարանի նորաբաց գիտական գրադարանի շենքի քանդակազարդ ճեմարանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության ղեկավարության, այ տասնամյակն հյուրերի, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների, առանձին նախարարությունների ու գերատեսչությունների ղեկավարների պաշտոնական ընդունելություն: Այն բացեց համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը:

Այնուհետև կույթ ունեցավ ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքյանը և նորանոր հաջողություններ մաղթեց համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանն ու աշխատակիցներին:

Ընդունելությանը մասնակցում էր և ելույթ ունեցավ նաև Ռուսաստանի Դաշնության համապետական ժողովի դաշնության խորհրդի նախագահ Վ. Շումեյկոն: Նա բոլոր ներկա գտնվողներին շնորհավորեց մեծ հոբելյանի առթիվ և վերջում համալսարանին մաղթեց նորանոր հաջողություններ: Ապա նա Երևանի պետական համալսարանին նվիրեց ռուս գեղանկարիչ Ս. Գ. Ռադիմովայի «Բնանկար» կտավը:

Դրանով Երևանի պետական համալսարանի հիմնադրման 75-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններն ավարտվեցին:

Վ. Ս. ՄԱՂԱՍՅԱՆ